ԸՆԴԴԻՄԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի ասպիրանտ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎԱԿԻՄԻ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ-Ի

ՎԱՆՈ ՍԻՐԱԴԵՂՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

ատենախոսության վերաբերյալ

1. Աշխատանքի արդիականության հիմնավորումը և գրականության վերլուծությունը

Սույն ատենախոսության սահմաններում քննվում են Վանո Սիրադեղյանի արձակին և հրապարակագրությանը վերաբերող հարցերը: Այս աշխատանքն ուշագրավ է այնքանով, որ ասպիրանտը ընտրել է նոր ընկալումներով ժամանակակից հայ արձակի՝ մասնավորապես պատմվածքի աշխարընկալումը բացահայտելու դժվարին ճանապարհը: Սիրադեղյանական արձակը հնարավորություն է ընձեռում նախ և առաջ 1970-80-ական թվականների գրական ընթացքը ճանաչել, տեսնել նոր գեղարվեստի առաջացման հնարավորությունները, նոր ժամանակներն ու գրական միջավայրը: Հենց սա է եղել Հովհաննես Հովակիմյանի խնդրադրումը: Արդեն իսկ նոր մոտեցում ժամանակակից գրականագիտության մեջ: Թեման արդիական է նաև այն իմաստով, որ մինչ այս նման անդրադարձ չի եղել Վանո Սիրադեղյանի գրականությանը և այս աշխատանքն այդ տեսանկյունից առաջինն է:

Ասպիրանտը մանրամասնորեն ուսումնասիրել է Սիրադեղյանի գրականությունը՝ կատարելով ընդհանուր առմամբ ծավալուն աշխատանք: Այն բաժանել է 5 գլուխների, որոնցում բարձրացրել է այնպիսի հարցադրումներ,

որոնք ուղղորդիչ են եղել գլխավոր նպատակի համար և հիմնավորում են կատարված աշխատանքի պատճառահետևանքային կապը:

Ատենախոսության լեզուն հստակ է, ասպիրանտի ասելիքը՝ համակարգված, տեսական և վերլուծական միտքը սահուն կապակցված են միմյանց: Հովակիմյանը կարողացել է հիմնավորել աշխատանքի արդիականությունը, մասնավորապես նշելով, որ «Քննադատության կողմից ժամանակին մատնանշված առանձին հատկանիշները լրացվում են, ցույց է տրվում հեղինակի գեղարվեստական մտածողությունը հնարավոր բոլոր կողմերով և մանրամասներով» (էջ 7):

2. Հետազոտության իրականացումը և արդյունքները

Մանրամասն ներկայացված է Սիրադեղյանի գրականությունը (պոեզիա, արձակ, հրապարակագրություն) դիտարկվել են գրական ընթացքի (1970-80-ական թթ.) բոլոր արձագանքները Սիրադեղյանի արձակի մասին, գրողի գաղափարական, տեսական հարցադրումները և լեզվաոճական հիմնական համակարգը: Օգտագործված են բավականաչափ աղբյուրներ, այդ թվում՝ տեսական գրականություն: Աշխատանքում հեղինակը քննել է նաև ազգային մտածողության և մշակույթի մեջ առկա կենսափիլիսոփայական երևումները և դրանց արձագանքները Սիրադեղյանի արձակի ամբողջական համակարգում, դրանք համադրել ազգագրական իմացություններով և մեկ ուրիշ տեսանկյունից վերլուծել առկա գրանյութը: Ատենախոսության կառուցվածքը, վերլուծության մակարդակը և ամբողջացումը այս առումով համակցված են ու հետաքրքրական: Բավականին իմացություններ ունի ասպիրանտը, կարողանում է վերլուծել գրական երևույթները, գնահատել, և այս ամենն ունի տեսական հիմք: Հեղինակի ոճը գիտական է լեզուն առանց խրթնաբանությունների: Ընդհանուր առմամբ, աշխատանքը ստացված է, հարցադրումների շրջանակը՝ հետաքրքրական, մանրամասնորեն քննված, կառուցվածքը՝ տրամաբանված, ինչը մեզ հնարավորություն է ընձեռում դիտարկումներ կատարել և արժևորեն աշխատանքը:

3. Աշխատանքի շարադրումը և ձևավորումը

Աշխատանքը կազմված է Ներածությունից, հինգ գլուխներից Եզրակացությունից և Օգտագործված գրականության ցանկից:

Ներածության մեջ տրվում է հարցի պատմությունը, կատարված աշխատանքի ամբողջական նկարագիրը, հարցադրումներն ու խնդրադրումները:

Աշխատանքի առաջին գլուխը, որը վերնագրված է «Վանո Սիրադեղյանի գրական մուտքն ու արձագանքները», ունի երեք ենթագլուխ: Առաջին՝ «Բանաստեղծական փորձերը» ենթագլխում ասպիրանտը անդրադառնում է ժամանակի գրական ընթացքին, և մամուլում, մասնավորապես՝ Վանո Սիրադեղյանի «Գարուն» ամսագրում լույս տեսած բանաստեղծություններին, վերլուծում դրանք և ընդգծում դրանց նշանակությունը. «Սիրադեղյանի տեքստն ավելի շատ էր հակված պատումայնության, և դա թերևս բանաստեղծությունից հեռանալու և սեփական պատմություններն արձակի ժանրային տարածության մեջ ամրագրելու գլխավոր պատճառներից մեկն էր» (էջ 11): Երկրորդ ենթագլխում, որ վերնագրված է «Առաջին պատմվածքները և գրողական հայտը», ասպիրանտը Սիրադեղյանի առաջին՝ «Տղամարդու խիղճը», «Թերեզի երջանկություն» և «Դուռը» պատմվածքներն է քննում, հաճախ դրանք վերլուծության ենթարկելով և ժամանակի գրական ընթացքի մասին վկայություններով ու փաստերով համադրելով:

Երրորդ ենթագլխում՝ ««Կիրակի» ժողովածուն որպես ստեղծագործական հանգրվան» վերնագրով, Հովակիմյանը շատ կարևոր տեսական հարցադրումներ է բարձրացնում՝ 1980-ական թվականների արձակի առիթով: Գուցե այս ժողովածուն որպես գրողական հանգրվան համարելը փոքր-ինչ չափազանցված է, այնուամենայնիվ, որ հավաքում և մեկտեղ ամփոփում է Սիրադեղյանի արձակի նարատիվը՝ փաստ է: Ասպիրանտը բարեխղճորեն ուսումնասիրել է նաև ժամանակի մամուլն ու համակարգորեն ներկայացնում է նաև «Կիրակի» ժողովածուի մասին եղած կարծիքները:

Երկրորդ գլուխը, որ վերնագրված է «Գյուղը և բնությունը իբրև գրական տարածություն», ունի երեք ենթագլուխ: Առաջին ենթագլխում, որն ունի «1970-80-ական թվականների հայ արձակի թեմատիկ ուղղությունները և Վանո Սիրադեղյանի պատմվածքները» խորագիրը, քննվում է հայ արձակի թեմատիկ բազմազանությունը, մատնանշվում են գյուղագրություն-քաղաքագրություն ներքին բախումները, ազգային թեմաների հասունացումն ու շռնդալից մուտքը ժամանակի գրականություն, մյուս կողմից էլ խորհրդային կյանքը գովերգող՝ գաղափարական պարտադրանքը չհաղթահարած գեղարվեստական ջանքը: Սա ահռելի նյութի իմացություն է ենթադրում, որն ի պատիվ ատենախոսի՝ տեսանելի է աշխատանքի այս մասում: Բոլոր արժանավոր հեղինակների (Հրանտ Մաթևոսյան, Պերճ Զեյթունցյան, Վարդգես Պետրոսյան, Զորայր Խալափյան, Բաղիշ Հովսեփյան, Վիգեն Խեչումյան և այլն) լավագույն ստեղծագործություններին անդրադառնում է Հովակիմյանը, միևնույն ժամանակ ներկայացնում է Վանո Սիրադեղյանի արձակի թեմատիկ ընդգրկումները և նրա սերնդակիցներին (Հովհաննես Մելքոնյան, Ռաֆայել Նահապետյան, Արտաշես Ղահրիյան, Վրեժ Իսրայելյան և այլք): Երկրորդ ենթագլխում՝ «Գյուղը և գյուղի մարդիկ Վանո Սիրադեղյանի արձակում. բնությունը և հոգեբանությունը» խորագրով, դիսերտանտը կատարում է տիպաբանական քննություն, վերլուծության ենթարկելով Սիրադեղյանի կերպարները: Երրորդ ենթագլխում՝ «Բնությունն իբրև գործոն Սիրադեղյանի արձակում» այս աշխատության գեղարվեստական կարևոր հարցադրումներից է, որով երևիտասարդ ուսումնասիրողն օգնում է Սիրադեղյանի ընթերցողին հաղթահարելու գրականության պայմանականությունը: Սիրադեղյանի պատմվածքներում մարդ-բնություն անքակտելի կապն առկա է, որը տեսել է ատենախոսը և թիրախային հարցադրում դարձրել իր աշխատանքի մեջ: Մասնավորապես Հովակիմյանը գրում է. «Գետի ֆենոմենը բացատրելիս Սիրադեղյանը մեզ տանում է դեպի այլաբանություն, փորձում կերպավորել բնության այդ տարրը, կենդանացնել և պատկեր ստեղծել՝ կերպար պատկեր» (էջ 85):

Երրորդ գլխում՝ «Ժանրային իրացումների և պատկերակերտման առանձնահատկությունները» վերնագրով երկու ենթագլխերում դիսերտանտը

կատարում է սիրադեղյանականական արձակի ժանրային վերլուծություն, հիմնականում անդրադառնալով պատմվածքի և վիպակի ժանրերին: Չնայած նշում է նաև ժանրի թարմացմանը միտված Սիրադեղյանի՝ ատենախոսի խոսքով ասած «դետալային լուծումները» (էջ 89): Այս գլխում թերևս կարևոր է որ մանրամասն վերլուծություն է կատարվում Սիրադեղյանի թերևս ամենածավալուն պատմվածքին՝ «Ձեռքդ ետ տար ցավի վրայից»:

Չորրորդ գլուխը, որը վերնագրված է «Սիրադեղյանի արձակի լեզուն և ոճը իբրև ժամանակի վերստեղծման և կերպարակերտման միջոց», հետաքրքիր մոտեցում է ենթադրում ուսումնասիրողի կողմից: Ուսումնասիրման այս հատվածն ավելի մոտ է լեզվաբանությանը, բայց մաքուր լեզվաբանություն համարելն էլ ճիշտ չի լինի: Ոճաբանական քննությունը մի կողմից հարստացնում է ուսումնասիրման հարցադրումների շղթան, մյուս կողմից դառնում է ուսումնասիրություն ուսումնասիրության մեջ, քանզի լեզվաոճական մի շարք երևույթներ գրականագիտական պատկերացումների հետ այնքան էլ չեն առնչվում: Մասնավորապես անդրադարձ է կատարվում ժողովրդախոսակցական և բարբառային բառերին, որոնց քննությունը լեզվաբանության հարցն է: Բայց մյուս կողմից լեզվաոճական քննությունն էլ փորձ է արվում ներկայացնել գրականագիտական հարցադրումների՝ այն է ժամանակի վերստեղծում և կերպարակերտում:

Հինգերորդ գլուխը նվիրված է Սիրադեղյանի հրապարակագրությանը: Ճիշտ է, դիսերտանտը օգտագործում է «հրապարակախոսություն», այն է խոսք (կարող է լինել նաև բանավոր) եզրույթը, որը գրեթե նույնիմաստ է, սակայն կարծում եմ պետք է օգտագործել «հրապարակագրություն», այն է՝ գիր: Երկու ենթագլուխ ունի այս գլուխը: Առաջինը նվիրված է Սիրադեղյանի հրապարակագրության մեջ արցախյան շարժման արձագանքներին, երկրորդը՝ Սիրադեղյանի գաղափարական հարցադրումներին:

Սակայն այս գլխում մի կարևոր հարցի պատասխան սպասելի էր, որ չկար: Խոսքս վերաբերում է Ավետիս Հարությունյանի խնդրին, որի հեղինակությամբ էլ լույս են տեսել Սիրադեղյանի հրապարակագրական հոդվածները: Հասկանալի է, կեղծանուն է, բայց մի փոքր անդրադարձ ու

հիմնավորում, որ Սիրադեղյանն է հանդես գալիս այդ անուն-ազգանունով, թերևս անհրաժեշտ էր: Հուսով եմ, ապագայում, երիտասարդ գիտնականը այս բացը կլրացնի:

Վերջում կատարվում են 14 կետից բաղկացած եզրակացություններ, տրվում են այն գլխավոր պատասխանները, որոնք ուսումնասիրողը բարձրացրել է իր աշխատանքի մեջ:

4.Դիտողություններ

Ուսումնասիրման նյութը հետաքրքիր ու տարաբնույթ հարցադրումներ է ենթադրում և նյութի ուսումնասիրման տարակերպ մոտեցումներ է թելադրում: Հովհաննես Հովակիմյանը հաղթահարել է իր առջև դրված խնդիրը, բայցևայնպես մի քանի դիտողություն-ցանկություններ.

1. Թերևս չափազանցված է Սիրադեղյանի «Կիրակին» ժողովածուն և Մաթևոսյանի «Օգոստոս» գիրքը նույն հարթության մեջ դիտարկելն ու համեմատելը:
2. Թերևս աշխատանքի կառուցվածքում ավելի շահեկան կլիներ յուրաքանչյուր գլուխը ոչ թե սկսել անմիջապես ենթագլխով, այլ մի փոքրիկ ներածական մաս ներկայացնել գլխում առկա գլխավոր խնդրադրման վերաբերյալ, ինչն արել է ուսումնասիրողը միայն հինգերորդ գլխում:
3. Չորրորդ գլուխը ևս կարելի էր բաժանել ենթագլուխների՝ առանձին դիտարկել լեզուն և ոճն իբրև ժամանակի վերստեղծման միջոց, և լեզուն և ոճն իբրև կերպարակերտման միջոց:
4. Գրականության ցանկը կարող էր ավելի հարուստ լինել, մանավանդ՝ Վանո Սիրադեղյանի սերնդակիցներից մեծ մասի գրքերը բացակայում են գրականության ցանկից:

5.Եզրակացություն. Դիտողություններն ավելի շատ ցանկություններ են՝ ավելի լավ տեսնելու ուսումնասիրությունը և չեն ստվերում կատարված հսկայական

աշխատանքը: «Վանո Սիրադեղյանի ստեղծագործությունը» աշխատանքը բավարարում է ատենախոսության պահանջներին, և հեղինակը՝ Հովհաննես Հովակիմի Հովակիմյանը արժանի է բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճանի շնորհմանը:

Գրախոս՝

Ավանեսյան Արմեն Ավանեսի

(ազգանուն, անուն, հայրանուն)

Բանասիրական գիտությունների թեկնածու

(գիտական աստիճան և կոչում)

ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվ. Գրականության ինստիտուտի սփյուռքահայ գրականության ուսումնասիրման բաժնի վարիչ

(աշխատանքի վայրը, աշտոնը)

Ստորագրություն ----------------

«13» հունիսի 2025 թ.

Հաստատում եմ Արմեն Ավանեսի Ավանեսյանի ստորագրությունը:
ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտի գիտական քարտուղար, բ.գ.թ. Մարինե Հակոբի Սարգսյան

ARMENIAN ACADEMY OF SCIENCES INSTITUTE OF LITERATURE SNCO
02505623